ցաւ Ը. դարի եկեղեցական մատենագրութեան մէջ, թէև դորա արձագանգները տեսնում ենք Զ. դարի վերջերին և Է. դարի առաջին քառորդին՝ Վրթանէս Քերթողի Սրբահամ կաթուղիկոսի անունից Աղուանից գրած թղթի մէջ(1)։ Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի երկերից երևում է, որ Հայերը երեք սրբասացութիւնը երգում են ի դէմս Որդւոյ, նորա խաչելութիւնը դաւանելով, որպէս ընդունելի մի պատարագ «կամօք Հօր և հաճութեամբ Հոգւոյն»(2)։

Նոյն գիրքն են բռնած Հայերը ԺԱ. դարու առաջին կիսում և յետոյ, երբ այդ վէճը աւելի խիստ կերպարանք էր ստացած Հայոց և Յունաց մէջ. Անանիա Սանահնեցին, նաև Հաղբատեցի կոչուած, կրկնում է, գրեթէ, Օձնեցու մտքերը, բայց աւելի որոշ. սրբասացութիւնը Որդու անունով է տաւում «սակս զերախտիս երեքանձնեայ ճշմարտութեանն յուշ առնելոյ հաւատացեալ ժողովրդոց, վասն զի Քրիստոսիւ ծանեան զերից անձնաւորութեանն զիտութիւն. եւ զի կամօք եւ ներգործութեամբ ամենասուրբ Երրորդութեանն առտուեալ բաշխեցան մեզ պարգեւք փրկութեան ի ձեռն խաչելութեանն Քրիստոսի, զոր սուրբ աւազանաւն ստանամք զանապականութիւն, զոր առաքեալն Պօղոս մեկնէ զխորհուրդ մկրտութեանն ի մահ որդւոյն Աստուծոյ եւ ընդ նմին թաղելոյ, զի ի մէջ երրորդութեանն Քրիստոս ճանաչի եւ խաչին չարչարանքն, ընդ նմա եւ մահն եւ թաղումն եւ յարութիւնն, որով կեանք տայ տիեզերաց»։ Յոյներն իրենց սրբասացութեամբ «զաստուածութիւնն Հօր եւ զհզօրութիւնն Որդւոյ, իսկ զանմահութիւնն սուրբ Հոգւոյն» են տալիս, որի դէմ մաքառում է նա. իսկ մենք «եւ զաստուածութիւնն եւ զհզօրութիւնն եւ զանմահութիւնն միոյ երեսաց որդւոյն Աստուծոյ տամք», բայց դորանով «հայր եւ հոգին ընդ չարչարանօք ոչ անկանի, որպէս եւ ոչ ի մարմնաւորութեանն, բայց կամակցութեամբ միայն, որով գործեցաւ փրկութիւն աշխարհի». ուստի Հայերը «յաւէտ պնդութեամբ եւ քաջահաւատ յուսով քան զամենայն ազգս բուռն հարեալ զսրբէասացիկ զերգոյս հանդերձ խաչեցարիւդ զմահ Քրիստոսի հանապազ պատմելով»(1)։ Երեք սրբասացութիւնն ըստ այդ կապուած է Եսայի մարգարէի տեսլեան մէջ (Զ. գլ.) սերովբէների փառաբանութեան հետ, որպիսի միտք արտայայտուած է նաև Օձնեցու վերագրուած մի ճառի մէջ(2), իսկ աւելի պարզ Պօղոս Տարօնեցու կողմից(3)։

Մեր պատկերն, ուրեմն, ոչ այլ ինչ է, բայց եթէ Քրիստոսի խաչելութեան «կամօք Հօր եւ հաճութեամբ Հոգւոյն» կատարուած պատարագի արտայայտութիւն արուեստի մէջ, որ մեզանում կարող էր ընդունելութիւն գտնել Ը. դարից ոչ վաղ, իրենց սրբասացութեան վէճերի հետ կապուած. մենք կ'տեսնենք, որ նոյն իսկ երեք սրբասացութեան խօսքերը այս պատկերագրութեան մաս են կազմել, որպէս թէ Յովսէփ Արեմաթացու կողմից երգուած՝ խաչից իջեցնելու ժամանակ։

Խնդրի այսպիսի բազմակողմանի քննութիւնից յետոյ, կարծում ենք, այժմ պարզ է, որ Հաւուց Թառի ներկայ պատկերի ծագումը մինչև Է. դար և Աշոտ պատրկի անուան հետ կապելու աւանդութիւնը պատմական լինել կարող չէ. նոյնացումը կատարուած է տեղերի և անունների չփոթութիւնից։ Հնագիտական նշաններից դատելով, հայ և օտար արուեստների համեմատութեամբ, այլ և դաւանաբանական հայեացքների վերլուծութեամբ, նորա նախատիպը ծագել կարող է Ը. դարից յետոյ՝ Թ–Ժ. դարերում։ ԺԱ. դարից արդէն ունինք Գրիգոր Մագիստրոսի արձանագրութեան մէջ այս «որ ի փայտին» պատկերի յիշատակութիւնը, որ անընդհատ շարունակւում է նորան նուիրուած վանքի արձանագրութիւնների և ձեռագրական յիշատակարանների մէջ մինչև մեր օրերը։

(1) Արարատ. 1896. 254. Թուղթ Յովհաննու Երուսաղեմի եպիսկոպոսի առ Արաս Աղուանից կաթուղիկոս։ Ապա 482. 484։

(1) Յովհաննու Իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք. Վենետիկ. 1834. 105. 112։ Խոսրովիկ Թարգմանիչ. հրատ. մեր ձեռքով։

(1) Ձեռ. Էջմ. N 1110. եր. 157. 158-160։

(1) Արարատ. 1896. 198։

(2) Ձեռ. Էջմ. N 141. 722ա։